

Apr 25 - Thursday

Friday

1919

891.99

U-28

6 NOV 2000



ԱՐՄԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Պ Օ Է Մ Ա

ԴԱՆՇԵԼ ԴԵԻ

ԼԵԳԵՆԴԱ



891.99

Մ-28

Տպարան «Մամուլ»—Կապույտ, Պ. Եփրեկեան և Յ. Մայրիկեան
Թիֆլիս, Կորիս-Մելիքեան փող. Մ 98

1919



ԱՐՄԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Պ Օ Է Մ Ա

ՅՅՈՒ. Գ Գ

Մ-28

ԴԱՆՇԵԼ ԴԵԻ

ԼԵԳԵՆԴԱ



«Մամուլ» — կապալ. Մ. Էփրեկեան 1 Յ. Մայիլեան
Թիֆլիս, Լորիս-Մելիքեան փող. № 22

1919

24 JUN 2013



18485-58

ԴԱՆԾԷԼ ԴԵՒ

ՀԻՊԵՆԴԱ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Շատ ու շատ հեռու, աշխարհի ծայրին,
Խոր-խոր ձորերում, մութ անտառներում,
Ապրում էր այնտեղ Դանշեյա դեր,
Տասնեակ հազարով՝ ծեր ու մանուկներ,
Բոլորը դեր,
Նրա առաջին ծունր էին դեր,
Գթութիւն հայցում:
Դանշեյա դեր որպէս Ենովան,
Նստած աղամանդ գահոյկի վրան,
Ձեռքը բարձրացրեց,
Աչքերը չռեց,
Շուրթերը շարժեց
Ու ժողոված դերին,
Հրաման տուց:
Բոլորը խորին երկիւղածութեամբ,
Գլուխները խոնհարած,
Շունչերը բաշած.
Հեքերը բռնած
Հսում են դեր
Պատէին ահարկու:

— Լսեցէք դուք, դուք չա՛ր ոգիներ,
 Ամենակարող Գէօննի զաւակներ,
 Գնացէք այժմ աշխարհը լցւէք,
 Զարութեան սերմը մարդկանց մէջ ցանէք:
 Որդին իւր հօր դէմ՝
 Կինը ամուսնոյ՝
 Ժողովո՛ւ ըզը պետի՝
 Ազգերն ազգերի՝
 Ընդէմ հանեցէք,
 Համարձակ մտէք մարդկանց սրտերը,
 Պոկէք, դէն գցէք՝ բարութեան սերմը:
 Թոյնը անխտիր՝ մարդկանց սրտերում,
 Թող լափէ, խանձէ, ամե՛ն սրբութիւն:
 Փոթորկէք ծովեր, Նաւեր խորտակէք.
 Միայն իմացէք,
 Որ խեղդողներին
 Աստծուն աղօթել,
 Երբէք չը թողնէք:
 Ով կը ընդիմանայ իմ հրամանին,
 Կըսկ թափեցէք դուք նրա գլխին:
 Բայց երբ որ տեսնէք ոյժը անզօր է,

— Փայլուն ոսկին այնժամ ձեզ կ'գնէ:
 Բաց արէք անա՛, այն ներքնայարկը,
 Որտեղ դիզ ած է ոսկին—արծաթը.
 Մարդիկ սիրում են փայլուն մետաղը.
 Եւ այդպիսով ահա՛ առատ կը լինի հունձը...
 Ոսկի ու արծաթ մէկին շատ տւէք:
 Իսկ միւսին խեղճ ու անճար թողէք.
 Ապա դո՛ք մտէք Թշառի սիրտը,
 Ու ոչնչացրէք Աստծու անունը:
 Թող ատելութիւնը նրանում զարթի,
 Մարդիկ մորթոտի,
 Տներ հրդէի,
 Այնժամ նա մեզ կ'պատկանի:
 Բարեկամներին իրար դէմ հանէք.
 Եղբայրը եղբօրը անհաշտ թշնամի,
 Նախանձի սերմը առատ ցանեցէք,
 Որպէսզի ձեր հունձը լի ու լի լինի:
 Գնացէք, մտէք, մեծ-մեծ քաղաքներ,
 Որտեղ լինում են յաճախ ժողովներ,
 Սողացէք, մտէք, մարդկանց սրտերը,
 Ու ոչնչացրէք շինած գործերը:
 Մի խօսքով որտեղ միութիւն տեսնէք,
 Ուր հասարակական գործ են կատարում,
 Շուտ, անմիաբանութեան սերմը ցանեցէք,

Ու բոլոր գործերը հիմքից կործանէք,
Դէ՛հ, այժմ գնացէ՛ք,
Պատուէրս անխտիր
Մտներդ պահէք,
Ու ճիշտ կատարէք:

II

Սինա լեռան հսկայ կատարին,
Կոյսի ամրոցը տալիս էր պեծին.
Պատերը ալմաստ,
Դռները գոհար,
Յատակը եաղուտ,
Կտուրը զմրուտ:
Արևն առաջին, շողքը արձակեց,
Աղամանդ լուսամուտից, դէպի ներս նայեց,
Թռաւ գեղունու սև աչին նստեց.
Կծեց ու նայեց,
Համբուրեց, շոյեց,
Ու նրա շահան՝
Աչերը բացեց:
Կոյսը շարժեց,
Վերմակը դէն գցեց,
Վեր կացաւ նստեց:

Սևսև ծամերը ինչպէս մի ովկեան,
Գեղ կրծքի վրայ՝ հանգիստ փռեցան:
Կիսաբաց լանջը՝ հանգիստ ու խաղաղ,
Բարձրանում վերև,
Իջնում էր ներքև:
Շապկի տակին,
Նրա կրծքին,
Մի զոյգ չքնան՝
Փոքրիկ գնդեր
Դուրս են ցցել:
Եւ երբ կոյսը վեր բարձրացաւ,
Մարմար սրունգը երևեցաւ,
Արևի շողքը գլուխը կախեց,
Ու սուս ու փուս՝
Նա դուրս չլեց...

III

Խոր ձորի միջից, դէպ հսկայ լեռը
Դէպի վառվառն չքնաղ ամրոցը,
Բարձրանում էր մի պատանի.
Շորերը զգգլաւ.
Մազերը թափթփաւ,
Ժայռից դէպ ժայռ՝

Մազլցելով,
 Մերթ սողալով
 Վեր էր ելնում:
 Մերթ կանգնում էր,
 Աղօթում էր,
 Քրտինքը սրբում,
 Ծանր շունչ քաշում,
 Ապա մեծ ոյժով,
 Դէպ վեր բարձրանում:
 Հասա վերջապէս կախարդ ամրոցին,
 Մոտեցաւ աղամանդ՝ փակ լուսամուտին,
 Թոյլ ձեռքը մեկնեց,
 Ու լուսամուտի ապակին բաղխեց:
 Կոյսը վախեցած շտապ բալլերով,
 Նազուկ ու չքնաղ,
 Դողդոջուն ձեռքով,
 Բացեց լուսամուտը, դէպի դուրս նայեց.
 Ու արծաթեայ ձայնով պատմունն կանչեց:
 — Ո՞վ ես դու. ո՞վ, է՛յ աղամորդի.
 Այդ ո՞ւմ ես վնորում դու խեղճ պատանի.
 Այն որ չար ոգին՝ խելքդ կ'ըրցրեց.
 Ու քեզ համարձակ դէպ այս կողմ մղեց...
 — Սէրը, սէրը, ո՞հ, անզին գեղունի,
 Ես քեզ պաշտում եմ՝ իմ Աստուածունի.

Գիշեր ու ցերեկ, առանց հանգստի
 Սար ու ձոր ընկած
 Լեռներ, անտառներ,
 Ոտքի տակ տւած,
 Եկել եմ ահա,
 Սէր խնդրում հիմայ.
 Ահա, ծունկ չոքած, քո ոտքի տակին.
 Խնդրում եմ սպանիր դու քու ստրուկին.
 Կամ կեանքս խնայիր,
 Ու ինձի սիրիր...
 — Ի՞նչ. ի՞նչ, դէ՛, մէկէլ ասա
 Բոլոր խօսքերդ, ես լաւ չիմացայ.
 Կարծեմ ասացիր «սիրում եմ»
 Յետոյ՝ եթէ ես քեզ չսիրեմ,
 Դեռահաս կեանքիդ վերջ պիտի դնեմ:
 Յետ դառ, յետ, դու անմիտ տղայ
 Ինձանից սէր՝ երբէք մի յուսայ:
 Ինձ որտեղ տեսար,
 Որտեղ սիրեցիր:
 — Երազիս մէջ, ես քեզ սիրեցի,
 Ես քեզ պաշտեցի, անզին դիցունի:
 — Դէհ գնա, գնա, շո՛ւտ արա.
 Հիմա հայրս կգայ,
 Ու քեզի ողջ-ողջ

Նա այրել կտայ:
 Ասաց դիցունին,
 Մի ակնթարթում՝
 Չքացաւ, կորաւ,
 Մէջն ապարանքի:
 — Ամենակարող Արարիչ Աստուած.
 Դո՛ւ, որ կապուտակ երկնքում նստած,
 Հանգիստ դիտում ես մարդկանց վշտերը,
 Դո՛ւ, որ բարութեան անուն ես կրում,
 Բայց մեզի երբէք-երբէք չես խղճում:
 Արարիչ Աստուած, ես մինչև հիմայ,
 Պաշտում էի քեզ որպէս սրբութիւն,
 Բայց հիմայ հասկացաւ,
 Որ քեզնից երբէք օգնութիւն չկայ:
 Դու անխիղճ աստուած,
 Եւ ինչո՞ւ համար, իմ ամբիժ սրտում,
 Գեհենի հրով լցրիր, տոչորիր,
 Ինչո՞ւ, ինչո՞ւ համար իմ երազներում,
 Գեղունու դէմքով ինձ չարչարեցիր...
 Ա՛հ, դու ինձ ծաղրեցիր...
 Ես պիտ ատեմ քեզ ողջ հոգուս ուժով,
 Եթէ ինձ սպառնաս այրել քո հրով,
 Քեզ հետ պիտ կուեմ, ողջ կամքիս թափով:
 Հեռո՞ւ ինձանից, զաղիր սրբութիւն,

Ես ատում եմ քեզ՝ կեղծ ազնուութիւն.
 Այժմ պիտ պաշտեմ, ոխ, քէն, ատելութիւն,
 Դրանով կգտնեմ միայն փրկութիւն:
 Եկէք, դուք եկէք, գէհենի գաւակներ,
 Աստծուց հալածւած-դուք չար ոգիներ.
 Յաւէտ ձեզ ընկեր, ես կուգեմ լինել
 Ու չար սիրտ Աստուծոյ դէմ, միշտ կօիւ մղել:

IV

— Կանգնիր այդ ո՛ւր, ո՞ր կողմն ես գնում.
 Այն ո՛ւմ էիր յուսահատ՝ ձայնով դու կանչում:
 Այդ ի՛նչ է ցաւդ, յայտնէր, մի վախի՛ր,
 Անհոգ դու յոյսդ՝ ինձի վրայ դիր:
 — Ո՞վ ես դու, հրեշտակ, ոգի՞,
 Եկար ծաղրելու վիշտը թշւառի.
 Հեռո՞ւ ինձանից՝ դու Աստուծոյ պատգամ,
 Ի՛նչպիսի դժոխքը ես պիտի գնամ:
 Էլ ես չեմ ուղղում փառքը երկնային
 Հոգիս պիտ ծախեմ Դանշէլա դէին:
 — Չեմ ես բարութեան ոգի,
 Հլու ստրուկը Դանշէլա դէի.
 Դէհ, եկ քեզ տանեմ, մեր պէտի մօտը,
 Ու նա կբուժի՝ քո դառը վիշտը:

Ասաց չար դեր,
Բռնեց պատանու
Թուլացած ձեռքը,
Քաշեց դէպ իրեն,
Եւ կրծքին սեղմեց,
Ու դէպի Դանշէլա դեր ուղղ եց:

V

Թռչում էր ոգին դէպի խաւարը,
Դէպի անարկու Դանշէլա դեր,
Ու իւր հեղձուցիչ՝ թունալից շունչը,
Թափանձում պատանու մինչ հոգու խորքը:
Հասաւ անտառին, վայր դրեց բեռը,
Ու ցոյց տւեց նրան, դերի ամ ոցը:

VI

Դանշէլ դեր՝ ընդունեց հիւրին,
Ուշադրութեամբ լսեց նորեկին.
Ապա դեերին շուրջը հաւաքեց,
Ու նորեկի հետ նա այսպէս խօսեց.
— Եթէ դու կուզես կոյսը քեզ սիրի,
Ու միայն աշխարհում նա քեզ պատկանի,

Պէտք է որ թողնես, ձեր հպարտ Աստծուն,
Որն իբր նստած է, անհոգ վերևում.
Նա ձեզ ծաղրելով՝ հոգի շունչ տուեց,
Բայց յաւիտեան, տունջանքի մատնեց:
Բայց ես, որ իշխում եմ մռայլ խաւարին,
Աչալուրջ հետևում, մարդկանց գոծերին,
Կտամ ուղածդ բախտաւոր կանեմ,
Դրա փոխարէն՝ հոգիդ ես կուզեմ:
Մոռացիր լոյսը, արև ու աստղեր,
Մոռացիր երկնի բարի հրէշաակներ.
Պաշտիր միմիայն՝ դու չար ոգիներ
Այնժամ կբռնես, քո դառը վշտեր:
— Ծանր է ծանր է, ինձ այդ երդումը.
Ձեմ ուզում այլևս աշխարհի փառքը:
Թող կոյսի սէրը, սրտումս միայ,
Միայն թէ հսգիս դժոխք չգնայ:
Ո՛հ սարսափում եմ՝ քո սառը հայացքից.
Ես վախենում եմ, ձեր ողջ դեերից.
Ես կհրաժարեմ գեղանի կոյսից,
Միայն ոչ երբէք, հանդերձեալ կեանքից:
— Հա, հա, հա, դու երազում ես փառքը երկիւքի,
Դա ստութիւն է՝ խեղճ աղամորդի.
Հրէայ Յիսուսը, մարդկութեան խաբեց.
Ու ձեր գլուխը, ցնորքով լցրեց:

Արաչի գահը, փթած է—խարխուլ,
Իմ իշխանութիւնն է՝ միմիայն ամուր:
Մարդ, գաղան, զեռուն օձ ու կարիճներ,
Բոլորը իմն են, իմ հպատակներ:
Դու հրաժարւում ես զեղ կոյսի սիրուց,
Հրաժարւում ես՝ կեանքից—վայելքից,
Նայիր, ինչպէս է կոյսը քեզ կանչո՞ւմ,
Ու բազկատարած՝ քո ձեռքը խնդրում:
Նայիր, ժպտում է. ահա, ծունկ չոքեց.
Ահա, աչերը դէպի քեզ յառեց.
Քո սէրն է հայցում.
Դէհ, գնա, շուտ արա,
Նա քեզ է պատկանում:
— Թող ինձ, թող ան, սիրտս, սիրտս,
Ա՛խ, կուչ են գալիս ձեռ ու ոտքերս.
Աղաչում եմ՝ թող ինձ, թող, որ հեռանամ...
— Նայիր, դէհ, նայիր, անմիտ պատանի,
Տես, կոյսը բացեց կուրծքը գեղանի.
Դէհ գնա-գնա, նրան տիրացիր.
— Ա՛խ, թող, բռնիր, թող մէկ էլ տեսնեմ,
Թող նրա շրթունքից մի համբոյր քաղեմ՝
Ա՛խ, նա հեռացաւ,
Ախ սիրտս տարաւ.—
— Դէհ ասա, կուզես երգել,

Ու քնքոյշ կոյսի զեղ սրտին տիրել:
— Ասա, ինչպիսի խօսքեր շռայլեմ,
Որպէսզի չարիդ բաւականցնեմ:
Ասա՝ շուտ արա, թռչել ես կուզեմ
Ու կրքծիս սեղմել ես կուզեմ կոյսին:
— Երգւիր խաւարով, չարի անունով,
Երգւիր, անսասան-անշէջ դժոխքով.
Երգւիր, աշխարհի անարդարութեամբ,
Ու ուժեղների անխիղճ բռնութեամբ.
Երգւիր, որ այժմն դու կատես Աստծուն,
Ու անհաշտ թշնամի կլինես բարուն:
Երգւիր, քանդել արդարութիւնը,
Որ թագաւորի՝ գոռ չարութիւնը.
Երգւիր, չարութեան դատարան հիմնել,
Ու իշխանութիւնս աշխարհ տարածել...
— Երգում եմ, երգում եմ չար ոգիներով,
Երգում եմ դժոխքի՝ փայլուն կրակով.
Ահա, վերցրու, հոգիս քեզ լինի,
Միայն թէ կոյսը՝ թող ինձ պատկանի:

VII

— Դէհ գնա, ահա դէպ Պինա լեռը,
Որտեղ շինւած է կոյսի ամրոցը.

Մտիւր համարձակ, նրա սենեակը,
Ու անվախ-փաթաթւի կոյսի վզովը...
Եթէ մի անի կարիք կունենաս,
Իսկոյն և եթ ինձի ձայն կտաս:
Ասաց չար դէր, մի ակնթարթում,
Չքացաւ, կորաւ, մէջն ապարանքում:
Արեւ ժայր մտաւ, խոր մութն ընկաւ,
Պատանին կոյսի սենեակը մտաւ:
Մերահարները իրար գրկեցին
Ու խաւարի միջին հանգիստ ննջեցին:

VIII

Հզօր իշխանը, ինչպէս ամէն օր,
Անում է դռներ, գիշերւան այցը.
Այսօր էլ մտաւ, կոյսի սենեակը,
Բայց այնտեղ տիրում էր՝ միին խաւարը:
Վախեց իշխանը: Ջայրացաւ, կանչեց,
Ծառայ, աղախին, գլխին հաւաքեց:
— Դո՛ք, սնբան անասուններ,
Թշուառ ստրուկներ,
Որտեղ է տիրուհին,
Ձեր իշխանուհին:
Շուտ, ջահեր վառէք,

Այստեղ լոյս արէք:
Մի ակնթարթում, կոյսի սենեակը,
Յոլացին գոյն-գոյն՝ վառ կրակները,
Ու տեսաւ իշխանը, որ իրա դուստրը
Մի անծանօթի հետ, խոր քուն էր մտել...
— Անէ՛ծք, այս ո՞վ է. այս ինչ եմ տեսնում,
Գուցէ աչքերիս տնսիլ է երևում:
Միթէ նա... Ո՛հ ոչ, ոչ, ապա մօտ գնամ,
Գնամ, ձեռքովս, շօշափեմ, տեսնեմ,
Դժոխք ու անէ՛ծք: զարթիր Ֆիադա,
Վեր կաց. այդ ո՞վ է, ասա, շուտ արա:
Ֆիադան վեր կացաւ ու դողդողալով,
Մօտեցաւ հօրը, դանդաղ քայլերով.
Առաջին ծունկ չոքեց,
Թևերը տարածեց,
Ու հզօր իշխանին
Հալով աղերսեց.
— Ներիր ինձ հայրիկ, որ առանց քո կոչի,
Առանց հայրական, բարի խորհուրդի
Ես ինձ թոյլ տւի,
Ու կուսական սիրտս՝
Ես սրան տւի:
Այժմ խնդրում եմ, օրհնանքդ կարդա,

18185-8



Ու մեզ յաւիտեան, բաղդաւոր արա:
 — Զայնդ, անաթօթ, հեռու ինձանից.
 Եթէ չես զգւել՝ քո մատաղ կեանքից.
 Ամօթ, պատկառանք, ոտքի տակ դրիր,
 Ու իմ պատիւս արատաւորեցիր:
 Դահիճ՝ շուտ արէք,
 Սըան վերցրէք,
 Ու վաղ առաւօտ,
 Կախաղան հանէք:
 Այժմ վերցրէք,
 Ու այս յանդուգին՝
 Նկուղում փակէք:

X

— Վեր կաց ֆիաղա,
 Նիկադայիդ օղնութեան գնա:
 Օրը կբացւի, արեւը կծագի,
 Բայց սիրեկանիդ, յաւէտ չես տեսնի:
 Հօրդ սենեակը, դէհ վեր կաց գնա,
 Բանալիները վերցրու,
 Բանտի դռները՝ անվախ բաց արա,
 Ու Նիկադայիդ դու փրկիր մահից:
 Ֆիաղան սրբեց, դառն արցունքները,

Սրբեց, չորացրեց, գեղ աչիկները,
 Ապա լսելով, իր սրտի ձայնին,
 Զգոյշ ու կամաց՝
 Նա առաջ գնաց:
 Անարգել մտաւ,
 Իր հօր սենեակը,
 Բանալին գողացաւ,
 Դուռը բաց արաւ,
 Ահով ու դողով,
 Իր սիրեկանին՝
 Բանտից դուրս բերաւ:
 — Դէհ շուտ արա, գնանք, հեռանանք
 Թէ չէ մեր կեանքը՝ վտանգի կտանք:
 Օրը կը բացւի,
 Հայրս կը զարթնի
 Ու մեզ երկուսիս,
 Կախաղան կհանի:
 — Ո՛հ, իմ սիրունիս, չքնաղ Ֆիաղա,
 Շնորհակալ եմ ես քեզից հիմա,
 Որ կեանքդ ինձ համար, վտանգի մատնեցիր,
 Ու Նիկադայիդ՝ մահից փրկեցիր:
 Բայց դէպ ո՛ր գնանք, ի՞նչպէս հեռանանք.
 Քո հայրն իշխան է.
 Նա ամենագոր է.

Մարդիկ կհանէ.

Ու մեզ կգտնէ:

— Հապա ի՞նչ անենք,

Ի՞նչպէս ազատենք:

Եկ զգոյշ դուրս գանք,

Ու այս մօտակայ՝

Լեռնում թագ կենանք.

— Սո՛ւս, մէկը գալիս է.

Այս կողմ եկ ահա,

Նա մեզ կը տեսնէ:

Ահա մօտեցաւ.

Ախ, նա մեզ տեսաւ:

Բայց ոչ, արդէն հեռացաւ:

— Պահելը սիր՝ լիս, դա գիշերապահն է,

Որ նա միշտ հօրս, արթուն հսկում է:

Վայ մեզ, եթէ նա տեսնի.

Գոնէ մի փոքր, մեր հոտն առնի.

Ախ սիրելիս ես վախենում եմ.

Այդ դաժան մարդուց, ես սարսափում եմ

Մի հնար գտիւր,

Մեր կեանքը փրկիր:

— Հնար... լսիր, տես ի՞նչ եմ ասում.

Անշուշտ կօզնես դու ինձ այդ գործում,

Վաղաւանից արդէն, ես իշխան կլինեմ,

Ու դաժան հօրդ դին՝

Խարոյկում կայրեմ,

— Ի՞նչ, ի՞նչ, հօրս սպանել...

Կուզես ինձ յաւիտեան, տանջանքի՞ մատնել...

Ես կհամաձայնեմ, ինձի զոհ բերել,

Քանթէ իմ հօրս, կեանքին վնասել:

— Լսիր ֆիաղա, քնքոյշ երեխայ,

Եթէ հեռանանք, մենք այս պալատից,

Ընդմիշտ կզրկենք, կեանքից, վայելքից,

Դու ուսում ես թողնեմ, այս հարստութիւն,

Այսքան խինդ ծիծաղ, այսքան բերկրութիւն,

Քո հայրն իշխան է, մի պետ աշխարհի,

Իշխող, հրամայող, բովանդակ՝ երկրի.

Իսկ մենք՝ ի՞նչ կլինենք, թշուառ ստրուկներ,

Կեանքում տառապող՝ խեղճ մուրացկանք.

Միթէ չես ուզում, որ քո սիրելիդ

Թագն արգայական նա դնէ գլխիդ...

— Ո՛հ ո՛չ, ո՛չ, ես կը հրաժարեմ,

Կեանքից, վայելքից,

Կհրաժարեմ՝

Պատւից ու փառքից:

Թող որ ես յաւէտ կորչեմ, չքանամ,

Քանթէ մի անխիղճ մարդասպան դառնամ:

— Խիղճ... հա, հա, հա, դա միայն ցնուք է.

Թշառ ու անճար ժարդկանց հնարքն է:
 Կեանքի ովկեանում մենք լող ենք ապլիս,
 Ալիքների հետ միշտ կռիւ տալիս.
 Մերթ յաղթում ենք,
 Ու ափ հասնում
 Մերթ սուզում ենք,
 Ու խեղդում:
 Ով որ ուժեղ է, լողում է անցնում,
 Ով որ տկար է, յատակն է սուզում,
 Իսպառ չքանում:
 Անվախ, համարձակ,
 Եկ առաջ գնանք,
 Արգելքներն յաղթենք,
 Մեր կեանքը փրկենք:
 Ահա, մի ժամից, խաւարը կցրի,
 Լոյս կը բացւի, արեւ կծագի,
 Բայց Նիկադայիդ՝ դու էլ չես տեսնի:
 Երբ որ դիակս, փայտից կձօճայ,
 Երբ որ մարմինս թռչնոց փայ դառնայ,
 Երկար մահակը, քո ձեռքը կառնես.
 Ու գիշատիչներին դէպ յետ կբշես.
 Այնժամ վայ կտաս,
 Օրդ կսգաս,
 Ու դեռահաս կեանդիդ.

Գուցէ և վերջ տաս:
 Իսկ եթէ լսես, դու իմ խորհրդին,
 Թագը կդնես վաղը քո գլխին:
 Չար դեւ մտաւ, գեղ կոյսի սիրտը,
 Այրեց ու խանձեց, որդիական սէրը,
 Նրա սրտումը՝ արիւնը սառեց,
 Ու դէպի հայրը վրէժով լցեց:
 — Քեզ մեռած տեսնել,
 Կեանքից հրաժարել,
 Փառքից զրկել...
 Ոհ, ո՛հ, ո՛հ...
 Թէպէտ ծանր է՝ կամքդ կատարել,
 Աւելի ծանր է՝ բեզնից զրկել.
 Կուգեմ ես վաղը, թագուհի լինել,
 Ու համայն աշխարհին, տիրել ու իշխել:
 Դէհ առաջ գնանք,
 Ու իմ դաժան հօր՝
 Մենք կեանքին վերջ տանք:
 Իշխանը սենեակում, հանգիստ էր առած,
 Վրէժի թոյնը, շրթունքում սառած.
 Նա սպասում էր, վաղ առաւօտեան,
 Թոյնը թափելու, վրէժի նդրութեան:
 Խաւարի միջից, որպէս սաւերներ,
 Չեղք— ձեռքի տւած, զոյգ մարդասպաններ

Հենց որ պահապանք գոնից հեռացան,
 Նրանք իշխանի սենեակը մտան:
 Պատանին կողքից, դաշոյ՛ը հանեց,
 Ու հզօր իշխանի կրծքումը մխեց...
 Մի թոյլ ձիչ, դողդոջ ու բեկ — բեկ,
 Որպէս վերջնական՝ հայրական անէծք:
 Սենեակը լցւեց,
 Հեկեկաց, լացից,
 Ապա բաց դռնից,
 Դէպի գուրս վազեց:
 Թուաւ դէպի վեր,
 Դէպ վայրուն աստղեր,
 Պատմից դաւաճան
 Վարմուքն իր գստեր:
 Աննկարելի, պահապաններից,
 Մարդասպանները, փախան սենեակից:
 Ֆիաղան նրան, սենեակում փակեց,
 Ապա ամբողջում նա հարայ տւեց.
 — Մատնութի՛ւն, մատնութի՛ւն,
 Դաւաճանութիւն,
 Է՛յ, պահապաններ,
 Թմրած ստրուկներ,
 Վեր կացէք եկէք,
 Հօրս դին տեսէք:

Պալատը վախեց,
 Ոարսափեց, ցնցւեց,
 Ու ողջը մէկանց՝
 Հայրասպան դստեր,
 Գլխին հաւաքւեց:
 — Է՛յ, գո՛ւք, անպիտաններ,
 Ախիդ՛ դահիճներ,
 Այ՛ ռը թշուառը,
 Խելքը կորցրեց,
 Ու իւր տիրոջը,
 Նա կեանքից զրկեց:
 Բոլորը սարսափով.
 Ահով ու դողով,
 Նրա առաջին՝ ծունր չոքեցին՝
 Ու երգւցին
 — Թող Արարիչը, զրկէ մեզ կեանքից,
 Թող շանթահարէ բոլորս մէկից.
 Թող որ չար ղեին՝ մենք բաժի՛ դառնանք,
 Թէ որ այս գործով մասնակից լինենք:
 Այն ռը ստրուկը, խելքը կորցրեց
 Ու իշխանի վայ, ձեռք բարձրացրեց:
 Խղճայ մեզ խղճոյ ով Աստուածունի
 Իսպառ անմեղ ենք, ազնիւ տիրուհի:
 Ահա երեսներս՝ քո ոտքի տակին,

Ջարդիր, կոտորիւր, քո ստրուկներին:
Գթայ մեզ անմեղ ենք
Ոչ մի մեղք չունենք
— Կորէք աչքիցս.
Գետնի տակ մտէք:
Միայն թէ... ո՛հ միայն,
Դուք դահճին գտէք...
Եթէ մի ժամից, ինձ չյանձնեցիք՝
Դուք դաւաճանին,
Առաւօտեան շանսատակ կը լինէք՝
Խարոյկի միջին:

XI

Խաւարը ցրւեց,
Արևը ծագեց,
Դղեակի առաջին՝
Խարոյկը վառւեց:
Ծուխը, բոցը, իրար խառնւած,
Տափնեակ մասերի նրանք բաժանւած,
Թռչում են, թռչում, դէպի անհունը
Ծածկում եթերը քողով անթափանց:
Տափնեակ անմեղներ,
Շարէ շար կանգնած,

Աղի արցունքը՝
Աչքերում սառած,
Մահւան երկիւղը,
Սրտերը պատած,
Կրակին են նայում
Հեքերը բռնած:
Նիկադան զուգւած,
Թագը՝ գլխին դրած,
Ֆիաղայի
Թևիցը բռնած,
Առջ անցկացաւ,
Ու պահապաններին,
Հրաման տաւ...
— Այրել...
Հզոր իշխանի, դիակը վերցրին,
Ու այն բոցավառ՝ խարոյկը գցին.
Նրա յետևից,
Իրար քամակից,
Հզոր իշխանի՝ պահապաններին
Անմեղ ու թշւառ, խղճուկ զոհերին,
Ի վարձատրութիւն, հաւատարմութեան,
Ոչոնք իշխանին՝ եղել են պաշտպան,
Խարոյկը նետեցին
Ու այրեցին...

Լեռները լցւեց, դռը մորմորով,
Մարտիրոսների, ողբագին ձայնով.
Նրանց բողաքը, թռաւ սլացաւ,
Ու մինչև աշխարհի ծայրը նա հասաւ:
Բայց ոչ ոք չը լսեց
Ուշք չդարձրեց:

XII

Չար ոգին կանգնած, խարոյկի շուրջը.
Ծծում էր մարդկանց, խանձւած հոտը.
Ուրախ հռհռում,
Դէս դէն էր թռչում,
Ու հզօր դանշէլի, յողթանա ն օրհնում:

ՎԵՐՉ.







ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1. Բանաստեղծո թիւների ժողովածուն
2. Աղջամուղջ դրամա 7 պատկերով
3. Մոսպուած աշխարհ դրամա 5 արարւածով.
4. Խորտակւած տաղանդ դր. 4 գործ. 7 պատկ
5. Խելագարը մենախօսութիւն

ԳԻՆՆ Է 3 ՐՈՒՔ.

<< Ազգային գրադարան



NL0352304

42110